8280

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար՝

Համբարձում Մաթևոսյան

«11» 09 2026թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 136 - 26

Նախաձեռնող՝ ***«Սանի Լենդ» ՍՊԸ***
Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Ծովագյուղ բնակավայր, 1-ին փողոց

Գործունեությունը՝ ***Հանքային փոշու, գիպսի և ցեմենտի արտադրություն***
Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Ծովագյուղ բնակավայր, Սևան-Դիլիջան մայրուղի 7-8 կմ 1/1 հողամաս

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 136 - 26

« 11 **»** 09 ***2026թ.***

Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի Սևան-Դիլիջան մայրուղի 7-8 կմ, 1/1 հողամաս հասցեում նախատեսվող հանքային փոշու, գիպսի և ցեմենտի արտադրության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող	«Սանի լենդ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակ	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՇՄԱԳ) հաշվետվություն, նախագծային փաստաթղթեր
Կատեգորիա	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայր	Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, Ծավագյուղ բնակավայր

Ներածական մաս. Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի Սևան-Դիլիջան մայրուղի 7-8 կմ, 1/1 հողամաս հասցեում «Սանի լենդ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) նախատեսում է իրականացնել հանքային փոշու, գիպսի և ցեմենտի արտադրության աշխատանքներ (այսուհետ՝ Արտադրություն):

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 4-րդ մասի 10-րդ կետի «բ» ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության որպես «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ: Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Սևան համայնքի կողմից 2026 թվականի հունիսի 15-ին տրամադրված N ՆԹ-7504-26 նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանք) հիման վրա՝ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի գրանցման վկայականով ամրագրված՝ 0.73786 հա ընդհանուր մակերեսով հողամասում (կադաստրային ծածկագիր՝ 05-049-0139-0011): Նշված հողամասից 0.10404 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը գյուղատնտեսական է, գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք, իսկ 0.63382 հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը՝ արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

Նկարագրական մաս. Ներկայացվող արտադրամասը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան խոշորացված համայնքի Ծովագյուղ բնակավայրի վարչական տարածքում (Սևան-Դիլիջան մայրուղի 7-8 կմ, 1/1 հողամաս)՝ «Սանի լենդ» ՍՊԸ-ին պատկանող ընդհանուր արտադրական հարթակում, որտեղ ներկայումս արդեն իսկ շահագործվում է ասֆալտբետոնի արտադրության տեղամաս («Kobesh Machine AS-160» ասֆալտի գործարան): Մոտակա բնակելի գոտին (Ծովագյուղ բնակավայրի առանձնատները) գտնվում է արտադրական հարթակի սահմանից և նախատեսվող գնդային աղացի տեղամասից շուրջ 505 մ

հեռավորության վրա: Սևանա լճից՝ 1560 մետր, «Սևան» ազգային պարկից հեռավորությունը 600 մետր է: Տարածքի հյուսիսարևելյան սահմանով հոսում է Ձկնագետը:

Երկրաբանա-գեոմորֆոլոգիական տեսակետից Սևանա լճի հյուսիս-արևելյան հատվածն իրենից ներկայացնում է փոքր խորդուբորդություններով պլատո, լցված լավաների բեկորներով և քարակտորներով (չինգիլներով), տեղ-տեղ ծածկված էլյուվիալդելյուվիալ և ալյուվիալ առաջացումների ծածկոցով: 45 Հիդրոերկրաբանական տեսակետից վերը նշված նստվածքները մեծ հետաքրքրություն են ներկայացնում, քանի որ իրենց մեջ պարունակում են ճալաքարերի ջրատար շերտեր: Այս ճալաքարային շերտերի հետ են կապված Սևանի ավազանի արտեզիան և ճնշունային ջրերը: Նախատեսվող գործունեության իրականացման տարածքը պատկանում է Սևանի ջրավազանային տարածքին և հիմնական ջրագրական միավորը Ձկնագետ գետն է ու Սևանա լիճը:

Դիտարկվող հողամասի կենտրոնական հատվածում ներկայումս գործում է ասֆալտբետոնե խառնուրդների արտադրության տեղամաս՝ ասֆալտի գործարան (X = 40°37'2.86" Y = 44°57'13.28"): Նախատեսվող հանքային փոշու, գիպսի և ցեմենտի նոր արտադրությունը հանդիսանում է առանձին տեխնոլոգիական միավոր, տեղակայվելու է գործող արտադրամասից առանձնացված հարթակի վրա և ունենալու է անկախ հոսքագիծ (X = 40°37'1.43", Y = 44°57'13.25"):

Նախատեսվող գործունեության՝ հանքային փոշու, գիպսի և ցեմենտի արտադրության համար գնդային աղացի՝ սարքավորման եզրաչափային չափսերն են՝ 19.0 մ x 11.5 մ, զբաղեցրած մակերեսը՝ 218.5 քմ: Նախատեսվող գնդային աղացը և դրան կից օժանդակ տեխնոլոգիական հարթակները տեղակայվելու են բացառապես հողամասի արդյունաբերական նշանակության գոտում (0.63382 հա հատվածի սահմաններում)՝ գործող ասֆալտբետոնե գործարանի հարևանությամբ: Հողամասի գյուղատնտեսական նշանակության հատվածը (0.10404 հա) մնում է անփոփոխ, զերծ որևէ կառուցապատումից կամ արտադրական միջամտությունից և չի ներգրավվելու տեխնոլոգիական պրոցեսում: Տարածքը ցանկապատված է, մեկուսացված բնակելի զանգվածից:

Նախատեսվող գործունեության շրջանակներում կապիտալ շինարարական աշխատանքներ (նոր շենքերի, շինությունների կառուցում) չեն նախատեսվում: Աշխատանքները սահմանափակվում են սարքավորումների (գնդային աղաց, բունկերներ, 25 էլևատոր) տեղակայման համար անհրաժեշտ պատվանդանների կառուցմամբ և պատրաստի հանգույցների մոնտաժմամբ: Գնդային աղացի տեղադրման և մոնտաժման աշխատանքների ընդհանուր տևողությունը նախատեսվում է 3 ամիս:

Նախատեսվում է կազմակերպել հանքափոշու, գիպսի և ցեմենտի արտադրություն՝ 11.25 տ/ժամ (կամ 90 տ/օր) արտադրողականությամբ: Տարեկան կտրվածքով արտադրական հզորությունը կկազմի 28.08 հազ. տոննա: Արտադրությունն իրականացվելու է չոր եղանակով:

Համաձայն Հաշվետվության՝ ցեմենտի արտադրության համար նախատեսված հումքի (կլինկեր՝ 80%, գիպս՝ 5%, պեռլիտ՝ 15%) բունկերներից համապատասխան բաժնեմասերով հումքը լցվում է ժապավենային փոխակրիչի վրա և տեղափոխվում դեպի գնդային աղաց, որտեղ պտտվող թմբուկում խառնվում է և ենթարկվում նրբաղացման՝ մինչև համապատասխան չափերի ստացումը: Նրբաղացված, համապատասխան չափերի հասցված համասեռ զանգվածը աղացից էլևատորով տեղափոխվում է դեպի սեպարատոր, որտեղ համախառն զանգվածը տարանջատվում է ըստ չափերի: Խոշոր հատիկները սեպարատորից նորից վերադարձվում են աղաց՝ հետագա նրբացման, իսկ նուրբ մանրահատիկ փոշին սեպարատորից օդային հոսքով տեղափոխվում է դեպի ցիկլոն և թևքային զտիչ, որտեղ որսված պատրաստի արտադրանքը օդային փոխադրիչի և էլևատորի միջոցով տեղափոխվում է պատրաստի արտադրանքի կուտակման սիլոս (աշտարակ): Սիլոսից ցեմենտը պարկերում փաթեթավորվելու նպատակով անցնում է թրթռամաղով,

վերջնական մաղման համար, որից հետո մտնում է փաթեթավորման սարք՝ պարկավորման համար: Պարկավորումից հետո այն տեղափոխվում է պատրաստի արտադրանքի պահեստ՝ իրացման համար: Հանքափոշու, գիպսի և ցեմենտի ստացման տեխնոլոգիական գործընթացը բերված է պատկեր 9-ում:

Որպես հումք օգտագործվելու է կլինկեր (80%), գիպս (5%) և պեռլիտ (15%): Կլինկերը և գիպսը բերվելու են պատրաստի վիճակում, իսկ պեռլիտի ներկրումը իրականացվելու է ՀՀ տարածքում գտնվող հանքերից: Հումքի մատակարարումը կկատարվի այն պարբերականությամբ, որպեսզի ապահովվի արտադրական աշխատանքների անընդհատությունը:

Հումքի (կլինկեր, գիպս և պեռլիտ) ընդունումը, պահեստավորումն ու պահպանումն իրականացվում է երեք կողմից փակ, միասնական արդյունաբերական պահեստում: Պահեստի ներքին տարածքը միաձույլ երկաթբետոնե միջնորմ պատերով բաժանված է երեք անկախ խցերի՝ կլինկերի (զբաղեցնում է տարածքի 70%-ը), պեռլիտի (20%) և գիպսի (10%) համար, ինչը բացառում է տարբեր հումքատեսակների մեխանիկական խառնումը միմյանց հետ և ապահովում է դրանց մաքրությունը: Հումքն ընկերության տարածք է տեղափոխվում այլ կազմակերպություններից:

Նախատեսվող գործունեության տարածքում կենտրոնացված կոյուղու ցանցի բացակայության պատճառով առաջացող կենցաղային կեղտաջրերի կառավարումը նախատեսվում է իրականացնել ինքնավար եղանակով: Կեղտաջրերի կուտակման համար նախատեսվում է կառուցել 3,0 մ^3 օգտակար ծավալով հերմետիկ տարողություն:

Պատճառաբանական մաս. Նախատեսվող գործունեության փորձաքննությունն իրականացվել է օրենսդրությանը համապատասխան: Գնահատման և փորձաքննության գործընթացում օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել է երկու հանրային լսում Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրում: Փորձաքննության գործընթացին մասնակցել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, կադաստրի կոմիտեն, քաղաքաշինության կոմիտեն, բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը, ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, «Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը, Գեղարքունիքի մարզպետարանը, Սևանի համայնքապետարանը: Փորձաքննական գործընթացում Օրենքով սահմանված կարգով գործընթացի մասնակիցներից ստացվել են առաջարկություններ և դիտողություններ, որոնք ամփոփվել են և փորձաքննական կենտրոնի դիտողությունների ու առաջարկությունների հետ միասին ներկայացվել են նախաձեռնողին՝ հաշվետվությունը լրամշակելու նպատակով:

Փորձաքննական գործընթացում՝ Օրենքի 17-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն, իրականացվել են տեղազննման աշխատանքներ՝ տարածքի փաստացի վիճակի և ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացված տեղեկատվության համապատասխանությունը պարզելու նպատակով: Տեղազննման աշխատանքների ժամանակ արձանագրվել են մի շարք անհամապատասխանություններ, կապված տարածքի փաստացի վիճակի, աղտոտվածության, տարբեր նպատակային և գործառնական նշանակության գյուղատնտեսական հողերի սահմանազատումների հետ կապված, առկա է Ձկնագետ գետի ափերի քայքայված վիճակ և գետին հարակից ափամերձ հատվածներում՝ հանքային նյութերի կուտակումներ: Հայցվող տարածքում առկա են շենք-շինություններ, շինարարական տեխնիկա և ասֆալտ-բետոնի արտադրության համար նախատեսված հանքային նյութերի մեծածավալ կուտակումներ: Ասֆալտ-բետոնի արտադրամասը գործող է, առկա են մուրի տեսանելի արտանետումներ, մինչդեռ

նախքան ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումը նախաձեռնողի կողմից որևէ տեղեկատվություն չի տրամադրվել այս կապակցությամբ:

Նախաձեռնողի կողմից հաշվետվությունը լրամշակվել է թերի, առկա են բազմաթիվ անհամապատասխանություններ և անճշտություններ.

- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականով հողամասը ծանրաբեռնված չէ որևէ շենք-շինությամբ, մինչդեռ լրամշակված ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացվել է տարածքում շենք-շինությունների, այդ թվում՝ գործող ասֆալտ-բետոնի արտադրամասի առկայություն (նույն անհամապատասխանությունը նշվել է նաև Գեղարքունիքի մարզպետարանի դիտողություններում): Ներկայացված գծագրական նյութերը պարունակում են ոչ լիարժեք տեղեկատվություն:

- 0.10404 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը դիտարկվել է որպես նախատեսվող գործունեության տարածք: Լրամշակված Հաշվետվությունում նշված հողամասը ներկայացվել է որպես մեկ ամբողջական տարածք՝ առանց համապատասխան տարանջատման և փոփոխվել է գնդային աղացի տեղադիրքը: Տեղազննության ժամանակ արձանագրվել է, որ դիտարկվող հողամասում հողերի սահմանազատում առկա չէ, առկա է ասֆալտ-բետոնի արտադրամասի գործունեության հետևանքով գյուղատնտեսական հողատարածքի աղտոտվածություն:

- Սևանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թթ. կառավարման պլանի համաձայն՝ Ձկնագետ գետը ներառված է Սևանա լճի Սևանի ՋԿՏ գետային ցանցում: Ընկերության կողմից Ձկնագետ գետից հեռավորությունը նշվել է տեխնոլոգիական սարքավորման (գնդային աղացի) տեղակայման կետից, ինչը 113 մ է կազմում: Տեղազննության արդյունքում պարզվել է, որ նախաձեռնողի կողմից փաստացի շահագործվող տարածքը երկու կողմից անմիջապես սահմանակցում է Ձկնագետ գետի փաստացի հոսքին և գործող ասֆալտ-բետոնի արտադրամասի առկայությունը լրացուցիչ բնապահպանական ռիսկ է ստեղծում Ձկնագետ գետի նկատմամբ: Ընկերության կողմից չեն ապահովվել և լրամշակված փաթեթում չեն ներառվել ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի «Ջրաէկոհամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափանիշների մասին» № 64-Ն որոշմամբ սահմանված սանիտարական պահպանման և անօտարելի գոտիներից հեռավորությունները: Հաշվետվությունում դրա վերաբերյալ տեղեկատվությունը և հնարավոր ազդեցությունները լիարժեք չեն դիտարկվել, մինչդեռ Ձկնագետ գետը Սևանա լճի ջրային համակարգում զբաղեցնում է կարևոր դեր:

- Փորձաքննական գործընթացում ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովի № Ֆ-15/2026 գրության համաձայն՝ Ընկերության կողմից ներկայացված հանքային փոշու, գիպսի և ցեմենտի արտադրության նախագիծը (գնդային աղացի տեղադրում) ենթադրում է հանքային նյութերի մեխանիկական մշակում Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում: Հաշվի առնելով նշված դիտողությունը՝ նախաձեռնողը լրամշակել է ՇՄԱԳ հաշվետվությունը՝ ներկայացնելով համապատասխան հիմնավորումներ, սակայն ՀՀ ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, ուսումնասիրելով նախատեսվող տեխնոլոգիական գործընթացի բնույթը, № Ֆ-26/2026 գրությամբ կրկին հաստատել է իր դիրքորոշումն առ այն, որ «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» ենթակետի համաձայն՝ Սևանի լճի անմիջական ազդեցության գոտում արգելվում է հանքանյութեր վերամշակող օբյեկտների տեղաբաշխումը:

- ՇՄԱԳ հաշվետվությունում ամբողջական ներկայացված չեն արտադրության համար նախատեսված պահեստային նյութերի տեղակայման, պահպանման ու տեղափոխման պայմանները: Մասնավորապես՝ բացակայում են պահեստավորվող նյութերի բաց/փակ եղանակով պահման դեպքում քամու ազդեցությունից դրանց փոշեառաջացման

կանխարգելման, ինչպես նաև տեղումների հետևանքով նյութերի լվացման ու դեպի Ձկնագետ գետ և Սևանա լիճ արտահոսքերի կանխման հստակ տեխնիկական լուծումներն ու բնապահպանական միջոցառումները:

- Առողջապահության նախարարության կողմից 2026 թ. մայիսի 21-ին № ԱԱ/04/16812 գրությամբ ներկայացվել է դիրքորոշում, որ հնարավոր չէ տրամադրել դրական կարծիք, քանի որ հաշվետվությունում բացակայում է տեղեկատվությունը (հաշվարկները) շինարարական աշխատանքների և արտադրամասի շահագործման ընթացքում աշխատատեղերում ու մոտակա բնակելի տարածքում առաջացող աղմուկի և թրթռումների մակարդակների վերաբերյալ, սակայն լրամշակված հաշվետվությունում նշված դիտողությունը հաշվի չի առնվել:

- Համաձայն քաղաքաշինության կոմիտեի դիտողության՝ նախատեսվող հանքային փոշու, գիպսի և ցեմենտի արտադրության գործունեությունը դասվում է բարձր ռիսկայնության աստիճանի (IV կատեգորիայի) օբյեկտների ցանկին, մինչդեռ, օբյեկտի նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) մեջ սկզբնապես նշվել էր II կատեգորիա: Լիազոր մարմնի դիտողությունից հետո կատարվել է նախագծման թույլտվության (ճարտարապետահատակագծային առաջադրանքի) փոփոխություն՝ ռիսկայնության աստիճանը սահմանվել է III կատեգորիա, ինչը ևս չի համապատասխանում լիազոր մարմնի պահանջին:

Հաշվի առնելով վերոնշյալ հիմնավորումները և այն հանգամանքը, որ նախատեսվող գործունեության տարածքը գտնվում է Սևանա լճի անմիջական ազդեցության գոտում՝ նախատեսվող գործունեությունը ջրային ռեսուրսների աղտոտման, Սևանա լճի էկոհամակարգի, ջրհավաք ավազանի և լանդշաֆտի վրա էական բնապահպանական ռիսկեր է պարունակում:

Օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ նախաձեռնողը պարտավոր է ապահովել ներկայացվող նյութերի ամբողջականությունը, հավաստիությունը և հիմնավորվածությունը:

Օրենքի 19-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ պետական փորձաքննական դրական կամ բացասական եզրակացությունները կազմելիս հաշվի են առնվում գործընթացի մասնակիցների ներկայացրած առաջարկությունները, դիտողությունները, կարծիքները և հանրային լսումների արդյունքները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Հիմք ընդունելով վերոնշյալ հիմնավորումները՝ «Սանի լենդ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Սևան համայնքի Ծովագյուղ բնակավայրի Սևան-Դիլիջան մայրուղի 7-8 կմ, 1/1 հողամաս հասցեում նախատեսվող հանքային փոշու, գիպսի և ցեմենտի արտադրության՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է պետական փորձաքննական բացասական եզրակացություն:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Հերիքնազ Մկրտչյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Աստղիկ Վարդանյան